2020թ. ապրիլի 5-ին կայանալիք ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի լուսաբանման համար լրատվամիջոցների հավատարմագրման պահանջները

Օտարերկրյա օրենսդրության հիման վրա գործող զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ, ներառյալ ԱԳՆ տարեկան հավատարմագրում անցած լրագրողները, որոնք ցանկանում են լուսաբանել 2020թ. ապրիլի 5-ին կայանալիք ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հավատարմագրվելու համար պետք է **մինչև մարտի 16-ը** հավատարմագրում (կարճաժամկետ հավատարմագրում) անցնեն Արտաքին գործերի նախարարությունում:

ՀՀ ԱԳՆ-ում կարճաժամկետ հավատարմագրման համար կարելի է դիմել նախարարության պաշտոնական կայքէջի միջոցով հետևյալ հղմամբ՝ https://www.mfa.am/hy/accreditation:

Այն հայտադիմումները, որոնք կստացվեն վերոնշյալ վերջնաժամկետից հետո, չեն դիտարկվի՝ ելնելով օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվական գործունեություն իրականացնողների հավատարմագրման համար հաստատված կարգի պահանջներից, որոնք սահմանվել են ՀՀ Ընտրական օրենսգրքի դրույթների հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից:

Հավատարմագրման հայտադիմումը պետք է պարունակի ամբողջ հետևյալ տեղեկատվությունը.

լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի համար.

- ազգանուն, անուն, հայրանուն (եթե հայրանունը նշված է անձնագրում) և բնակության վայր,
- լրատվական գործունեություն իրականացնողի կողմից տարածվող զանգվածային լրատվության միջոցի անվանում, ծանուցման հասցե, հեռախոսահամար,
- նշում տվյալ զանգվածային լրատվության միջոցի տարածման սկզբնաժամկետի (արտոնագրված վերգետնյա եթերային հեռարձակում

իրականացնելու դեպքում նշում նաև այդ մասին), ինչպես նաև անցկացվող հանրաքվեի անվանման և անցկացման օրվա մասին:

- կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ,
- դիմումի տրման ամսաթիվ,
- դիմողի ստորագրություն:

լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի համար.

- զանգվածային լրատվության միջոցի անվանում, կազմակերպական-իրավական ձև, գտնվելու վայր,
- զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի ազգանուն, անուն, հայրանուն,
- անցկացվող հանրաքվեի անվանում և անցկացման օր,
- կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ,
- դիմումի տրման ամսաթիվ
- լրատվական միջոցի տնօրենի կամ գլխավոր խմբագրի ստորագրություն և ՁԼՄ կնիք:

ՀՀ ԱԳՆ տարեկան հավատարմագրում ունեցող օտարերկրյա օրենսդրության հիման վրա գործող ՁԼՄ ներկայացուցիչների հայտադիմում-նամակը պետք է պարունակի լրատվական միջոցի տնօրենի կամ գլխավոր խմբագրի ստորագրությունը և ՁԼՄ կնիքը, անցկացվող հանրաքվեի անվանումը, օրը, ինչպես նաև դիմումի տրման ամսաթիվը:

Նկարահանող կամ տեսագրող հատուկ սարքավորումներ (օր.՝ անօդաչու թռչող սարքերի, ԱԹՍ) օգտագործելու դեպքում հայտադիմումին կցվում է դրանց տեխնիկական նկարագրության մասին տեղեկատվությունը: **Խնդրում ենք հաշվի առնել, որ նման սարքավորումների որոշ տեսակների օգտագործման համար կարող են լինել սահմանափակումներ**:

Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հավատարմագրումը հաստատելուն պես Արտաքին գործերի նախարարությունը կտրամադրի հավատարմաքարտերը: Հստակ ժամկետի մասին կհայտարարվի հաջորդիվ: